ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՌԱԴԻՈՆ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 11-ՐԴ ԴԱՍ.

ՍՈՎՈՐՈՂ՝ ՍԵԴԱ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՖՅԱ ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2024Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք

- *Ներածություն*
- *Գլուխ 1. Ռադիոյի պատմությունը*
- *Գլուխ 1.1. Ռադիոն Հայաստանում*
- *Գլուխ 2. Ռադիոտունը Երևանում*
- *Գլուխ 2.1. Ռադիոյի զարգացման փուլերը*
- *Գլուխ 3. Ռադիոհաղորդումներն այսօր*
- *Հարցազրույց*
- *Եզրակացություն*
- *Գրականության ցանկ*

Ներածություն

Ինչո՞ւ եմ ընտրել այս թեման.

Դեռ շատ փոքր տարիքից, երբ դեռ դպրոց չէի գնում, ես ու քույրս մեր սենյակում ունեինք ռադիո, որով լսում էինք շատ տարբեր հաղորդումներ: Ինձ միշտ շատ հետաքրքիր էր ռադիոն, որովհետև 4 կամ 5 տարեկան Սեդան չէր հասկանում, թե որտեղից են հնչում այդ ձայները, և երբեք էլ չէր պատկերացնի, որ կգա մի օր, և նա կամավորական հիմունքով կաշխատի Հանրային ռադիոյի մանկապատանեկան

հաղորդումների տաղավարում: Որպես կրտսեր թղթակից՝ մասնակցում եմ ձայնագրությունների կամ ինքս եմ գնում հարցազրույցների: Իմ կարծիքով, ավելի խորը ուսումնասիրելով այս թեման, ինձ համար էլ կանեմ նոր բացահայտումներ ռադիոյի աշխարհում և ավելի շատ կսիրեմ ապագա մասնագիտությունս:

Գլուխ 1. Ռադիոյի պատմությունը

Ռադիոն ստեղծել է ռուս գյուտարար Ալեքսանդր Պոպովը 1895 թվականի մայիսի 6–ին (այդ օրը նախկին ԽՍՀՄ–ում նշվում էր որպես ռադիոյի օր):

Իրականում այնքան էլ այդպես չէ:

Պարզվում է, որ «ռադիոյի գյուտարար» կոչմանը հավակնում են բազմաթիվ մարդիկ: Նրանք բոլորն էլ ինչ-որ չափով ռադիո են հայտնագործել: Առաջին արտոնագիրը ստացել է ամերիկացի ատամնաբույժ Մալոն Լումիսը 1872 թվականին, ով դեռևս 1866 թվականին հայտարարում էր, որ հայտնաբերել է անթել կապի սարք: ԱՄՆ - ում ռադիոյի պիոներներ են համարվում նաև Խյուզը (1878թ.), Էդիսոնը (1875թ., արտոնագիր՝ 1885թ.) և Տեսլան (արտոնագիրը՝ 1878թ.), Գերմանիայում՝ Հերցը (1890թ.), Ֆրանսիայում՝ Բրանլինը (1890թ.), Անգլիայում՝ Լոդժը (1894թ.), Հնդկաստանում՝ Չինդրու Բոշենը (1894թ.), Իտալիայում՝ Մարկոնին (1896թ.), և վերջապես Ռուսաստանում՝ Պոպովը:

Պարզվում է, որ հայերը ռադիոյի հայտնագործության գործում ոչ մի ավանդ չունեն, չնայած նրան, որ ամեն իրեն հարգող երկիր ունի իր

ռադիոյի գյուտարարը: Բայց դե, մի մխիթարություն էլ կա. մենք էլ ունենք աշխարհի ամենահայտնի և սիրված ռադիոն՝ «Հայկական ռադիոն»:

Այսպես, իտալացի մարկիզ Գուլիելմո Մարկոնին հաճախ համարվում է ռադիոյի հայրը: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Մարկոնին փորձեր կատարեց և ստեղծեց առաջին գործնական ռադիոկապի համակարգը: Նա հաջողությամբ ուղարկեց և ստացավ ռադիոալիքներ զգալի հեռավորությունների վրա՝ ցույց տալով անլար կապի իրագործելիությունը: Մարկոնիի աշխատանքը հիմնված է բազմաթիվ գիտնականների և գյուտարարների հայտնագործությունների վրա, ովքեր նպաստել են էլեկտրամագնիսականության և անլար փոխանցման ըմբռնմանը: Նրա սկզբնական փորձերը հանգեցրին տեխնոլոգիայի զարգացմանը, որն ի վերջո վերածվեց ռադիոյի, ինչպես մենք գիտենք այսօր:
1895 թվականին Մարկոնին անլար ազդանշան ուղարկեց մոտ 1,5 մղոն հեռավորության վրա Իտալիայում, և մինչև 1901 թվականը նա հաջողությամբ ռադիոազդանշաններ փոխանցեց Ատլանտյան օվկիանոսով՝ Անգլիայի Կորնուոլից մինչև Նյուֆաունդլենդ, Կանադա: Այս բեկումնային ձեռքբերումը շրջադարձային կետ դրեց գլոբալ հաղորդակցության մեջ և ճանապարհ հարթեց ռադիոտեխնոլոգիաների լայն կիրառման համար:

Գլուխ 1.1. Ռադիոն Հայաստանում

Այս գլուխը սկսենք փոքրիկ նախաբանով.

Փետրվարի 13-ը Ռադիոյի համաշխարհային օրն է: Հայկական ռադիո և անեկդոտներ. առաջին հայացքից սրանք երկու տարբեր հասկացություններ են: Մինչդեռ տարիներ առաջ «հայկական ռադիո» ասելիս Խորհրդային Միության բազմազգ գրեթե բոլոր քաղաքացիները հասկանում էին նաև անկեդոտներ:
Իրականում ժամանակին ռադիոյի խմբագիրներն այստեղ-այնտեղ պատմել են այն զվարճալի դրվագները, որ տեղի են ունեցել ռադիոյի շենքի ներսում, աշխատակիցների սրամտությունները: Դրանք անցել են բերնեբերան ու վերածվել շարքի, մարդիկ էլ սկսել են նոր անեկդոտներ ավելացնել արդեն եղածներին:

Առաջին պետական ռադիոկայանը Հայաստանում հիմնվել է Առաջին հանրապետության տարիներին: Պատմությանը հայտնի «Մարկոնի» տիպի «ուժեղ ռադիոկայանը» գնվեց Թիֆլիսում և Երևան տեղափոխվեց

1919 թվականի ապրիլի 28-ին։ Այն ձայնային չէր, կիրառվում էր ռադիոհեռագրեր ուղարկելու համար։ Կառավարության որոշմամբ ռադիոկայանը տեղակայվեց Երևանի երկաթուղային կայարանի վարչական շենքում և հանձնվեց Զինվորական նախարարությանը գավառների և այլ պետությունների հետ շուրջօրյա կապ հաստատելու համար։ Պետական արխիվում պահվող փաստաթղթերից տեղեկանում ենք, որ ռադիոկայանն ուներ 9 կիլովատ և 17 ամպեր հզորություն, լրատվություն կարող էր ուղարկել մինչև 1000 վերստ։ Ռադիոֆիկացման քարտեզի ստեղծումից և ռադիոաշտարակի կառուցումից հետո, 1926 թվականի սեպտեմբերի 1-ին հանրապետական նշանակության պետական ռադիոկայանը երկաթուղային կայարանի վարչական շենքից եթեր հեռարձակեց 25 րոպե տևողությամբ առաջին փորձնական ռադիոհաղորդումը։

Ընդմիջելով երաժշտությունը՝ հաղորդավար Սուրեն Քանանյանը մի քանի անգամ հայտարարել է. «Լսեցե՛ք, լսեցե՛ք, խոսում է Երևանի լայնահաղորդ կայանը» բառերն ու հաղորդել տեղական նշանակության մի քանի լուր։

Պահպանվել են հետաքրքիր տեղեկություններ առաջին փորձնական հաղորդումների նախապատրաստման մասին, թե ինչպես ռադիոհաղորդումների կազմակերպիչները շրջում էին Երևանով մեկ՝ այս կամ այն երգչին գտնելու և ռադիոկայան հրավիրելու համար։ Հայտնի է նաև, որ դա ոչ միշտ էր հաջողվում։ Համարյա նույնն էլ հիմա է…

1920-ականներին Երևանում մեծ բարձրախոսներ տեղադրվեցին։ Երաժշտություն և լրատվություն էր հաղորդվում այգիներում, քաղաքի տարբեր մասերում։ Եթերը բաղկացած էր փոքր լրատվական բլոկից և երաժշտությունից, ընդ որում, այդ ժամանակ հաղորդումները չէին

ձայնագրվում, ուղիղ էին հեռարձակվում: Արևելյան անսամբլներ ու տարբեր երգիչներ ուղիղ հեռարձակմամբ էին եթեր դուրս գալիս: Իհարկե, եղել են նաև վրիպումներ. չէ՞ որ հաղորդավարներն օժտված չեն եղել հաղորդավարական հմտություններով, գրեթե բոլորը տեխնիկական աշխատողներ էին. ամեն բան դեռ նոր էր սկսվում: Պարբերական հեռարձակումները սկսվեցին 1927-ից:
Արդեն 1929թ.-ից հաղորդումներն սկսեցին վարել ռադիոհաղորդավարները: Առաջիններից էին Վերգինե Բաբայանն ու Սուրեն Քանանյանը: Ավելի ուշ բացվեց հաղորդավարների և լրագրողների դպրոց: Ռադիոյում աշխատել ցանկացողները փորձաշրջան պիտի անցնեին, լավ ձայն ունենային: Տեղին է հիշել այդ տարիների լավագույն հաղորդավարուհի Հրաչուհի Ջինանյանի խոսքերը. «Ամենահիմար նյութը, եթե ճիշտ ձայնով մատուցես, մարդիկ ոչ միայն կհավատան, այլև կհուզվեն»:

Ավագ սերնդի ներկայացուցիչները և հատկապես Հայրենական մեծ պատերազմի վետերանները կհիշեն համամիութենական ռադիոյի հաղորդավար Յուրի Լևիտանին, որի ձայնը, ձայներանգն ու առոգանությունը զարմանք և հիացմունք են պատճառել ռադիոլսողներին:

Այստեղ մեջբերենք մի դրվագ. Մանուկ հասակում նրան անվանում էին «Շեփոր»՝ հնչեղ ձայնի համար: Չնայած այն բոլոր բնատուր տվյալների և տաղանդի, որով օժտված էր Լևիտանը, նրա ճակատագիրը կարող էր դասավորվել այլ կերպ, եթե չլիներ Ստալինը, ով մի օր երեկոյան լսել է, թե ինչպես է իրեն անծանոթ հաղորդավարը կարդում «Պրավդա» թերթի խմբագրական հոդվածը: Առաջնորդն անմիջապես զանգահարում է

Ռադիոկոմիտե և ասում, որ հաջորդ օրվա իր ելույթը կուսակցության XVII համագումարի բացմանը պետք է կարդա «այդ ձայնը»։
Այնուհետև ռադիոն հայտնվում է խորհրդային իշխանությունների ուշադրության կենտրոնում: 1929 թ. վերջերին հիմնվեց հանրապետական ռադիոկոմիտեն, որի առաջին 12 աշխատակիցները նախկին ռադիոկայանի կամ ռադիոսիրողների շարժման մասնակիցներ էին։
Բայց Ռադիոն, որպես քարոզչության անփոխարինելի միջոց, արդեն հայտնվել էր պետանվտանգության և կուսակցության ղեկավարության ուշադրության կենտրոնում։ Ռադիոյում հնչած ամեն մի խոսք վերահսկվում էր:
Ու եթերից ասված ցանկացած ազատ միտք կարող էր շինծու մեղադրանք դառնալ Ռադիոյի «անցանկալի» աշխատողների և հյուրերի համար։
Նրանց թվում հայտնվեց նաև ռադիոգործի նվիրյալներից մեկը՝ ռադիոկայանի վարիչ Կոնստանտին Ավետիսյանը։

Գլուխ 2. Ռադիոտունը Երևանում

Առաջին ուղիղ ռադիոռեպորտաժը կազմակերպվեց 1934թ.-ի մայիսի 1-ին Երևանի Լենինի անվան (այժմ Հանրապետության) հրապարակից։ Այն վարեց հաղորդավար Եղիշե Հովհաննիսյանը:

Հայրենական մեծ պատերազմի սկսելու մասին լուրը Հայաստանի ռադիոն հաղորդեց 1941 թ.-ի հունիսի 22-ին՝ ժամը 12-ին։
Այդ տարիներին Ռադիոն հաճախ պաշտոնական լրատվությունը եթեր էր

հեռարձակում՝ չսպասելով պաշտոնական ամփոփագրերի:
1950-ականները նշանավորվեցին նրանով, որ շահագործման հանձնվեց այն ժամանակվա լավագույն տեխնիկայով ու սարքավորումներով հագեցած Ռադիոտունը: Ճարտարապետի՝ Հովհաննես Մարգարյանի ոչ բոլոր մտահղացումներն իրականություն դարձան: Ըստ նախնական տարբերակների՝ Ռադիոտան ճակատային մասը պետք է պսակվեր եռաստիճան աշտարակով և սայրաձողով (շպիլ), որը պարզ երևում է էսքիզներում: Այն այդպես էլ չկառուցվեց, քանի որ 1955 թվականին ընդունվեց Կոմունիստական կուսակցության և ԽՍՀՄ կառավարության համատեղ որոշումը «Ճարտարապետական ավելորդությունների դեմ պայքարի» մասին:
Ռադիոյում հաղորդումներն սկսեցին երաժշտական ձևավորմամբ ներկայացվել 1950-ականներից՝ երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագիր Արամ Սաթունցի նախաձեռնությամբ:
1965 թ.-ին հիմնադրվեց ֆոնդային ձայնագրությունների խմբագրությունը:
Ձայնադարանին շենքի նկուղային հարկում նոր տարածք հատկացվեց: Ստեղծվեցին տեխնիկական պայմաններ ձայնագրությունների երկարատև պահպանման համար:

Ռադիոտուն- Երևան, Ալեք Մանուկյան- 5

Գլուխ 2.1. Ռադիոյի զարգացման փուլերը

Ռադիոյի էվոլյուցիան իր վաղ օրերից ուշագրավ է եղել որպես հաղորդակցման պարզ գործիք, վերածվելով բազմազան և բազմակողմանի միջավայրի, որը հարմարվել է տեխնոլոգիական առաջընթացին և հասարակական փոփոխություններին:

Վաղ օրեր և հեռարձակվող ռադիո. Մարկոնիի բեկումնային փորձերից հետո ռադիոն զարգացավ որպես կետ առ կետ հաղորդակցության միջոց: Այնուամենայնիվ, այն շուտով անցավ ռադիոյի հեռարձակմանը, որտեղ կայանները նորություններ, զվարճանքներ և երաժշտություն էին հաղորդում ավելի լայն լսարանի համար: Այս դարաշրջանը տեսավ

խորհրդանշական ռադիոհաղորդումների և անհատականությունների վերելքը:

Ռադիոյի ոսկե դար. 1920-1930-ական թվականներին ռադիոն դարձավ տնային տնտեսությունների համար ժամանցի կենտրոնական աղբյուր: Ռադիոթատրոնը, էստրադային շոուները և լուրերի հաղորդումները գերում էին ունկնդիրներին: Ընտանիքները հավաքվում էին ռադիոների շուրջ՝ երեկոյան ռադիոհաղորդումները միասին ունկնդրելու համար:

FM և ստերեո հեռարձակում.

20-րդ դարի կեսերին ներկայացվեց հաճախականության մոդուլյացիան (FM), որն ապահովում էր ձայնի ավելի լավ որակ՝ համեմատած ավելի վաղ ամպլիտուդի մոդուլյացիայի (AM) մեթոդի հետ: Ստերեո հեռարձակումն է՛լ ավելի բարձրացրեց աուդիո փորձը, որն ավելի հարստացրեց ձայնային բովանդակությունը:

Թվային տեխնոլոգիաների գալուստը իսկական հեղափոխություն էր ռադիոյում: Թվային հեռարձակումը, ինչպիսիք են՝ թվային աուդիո հեռարձակումը (DAB), HD ռադիոն և ինտերնետ հոսքը ապահովում էին ավելի հստակ ընդունում և ավելի շատ ալիքներ՝ թույլ տալով մասնագիտացված բովանդակություն ապահովել տարբեր հետաքրքրությունների համար:

Ինտերնետ և հոսք. Ինտերնետի առաջ գալով՝ ռադիոն ընդլայնվեց ցամաքային հեռարձակումների սահմաններից դուրս: Առցանց հոսքը և փոդքասթները ունկնդիրներին հնարավորություն են տվել մուտք գործել բովանդակություն ամբողջ աշխարհում՝ կոտրելով աշխարհագրական սահմանափակումները և առաջարկելով ըստ պահանջի ծրագրավորում: Բջջային և խելացի սարքեր. սմարթֆոնների և խելացի բարձրախոսների

տարածումը ռադիոն ավելի հասանելի է դարձրել: Հավելվածները և հոսքային ծառայությունները թույլ են տալիս օգտվողներին լսել իրենց սիրելի կայանները կամ փոդքաստները ցանկացած վայրում և ցանկացած ժամանակ:

Ինտեգրում այլ լրատվամիջոցների հետ. Ռադիոն ինտեգրվել է այլ լրատվամիջոցների հետ: Այժմ շատ կայաններ իրենց հեռարձակումները միաժամանակ հեռարձակում են առցանց, լսարանների հետ շփվում են սոցիալական լրատվամիջոցների միջոցով և ներառում են տեսանյութերի տարրեր իրենց բովանդակության մեջ:

Փոդքասթների առաջացում. Փոդքասթները մեծ ժողովրդականություն են վայելել՝ առաջարկելով տարբեր թեմաներով բովանդակության լայն շրջանակ: Նրանք ապահովում են երկարատև պատմություններ, հարցազրույցներ, կրթություն և ժամանց՝ թույլ տալով ունկնդիրներին խորանալ կոնկրետ թեմաների մեջ:

Ռադիոյի էվոլյուցիան շարունակվում է՝ հարմարվելով տեխնոլոգիական նորամուծություններին և փոխելով լսարանի նախասիրությունները՝ միաժամանակ մնալով տեղեկատվության, ժամանցի և մշակութային կապի կարևոր միջոց:

Գլուխ 3. Ռադիոհաղորդումներն այսօր

Ընդհանրապես և՛ ռադիոն, և՛ համացանցը ընդամենը տեխնոլոգիական պլատֆորմներ են: Մենք նույնպես օգտվում ենք համացանցի ընձեռած հնարավորություններից, այնտեղ տեղադրում ենք հաղորդումները, բայց այս ամենով ռադիոն չի դադարում ռադիո լինելուց: Ռադիոն աշխատող մարդու, աշխատանքի գնացող անհատի լրատվամիջոց է, այսինքն մարդը, որը ճանապարհին է և չունի համացանցի կամ հեռուստացույցի հնարավորություն, միանշանակ օգտվում է ռադիոյից:
Ո՞ր ռադիոհաղորդումներն են մարդիկ նախընտրում սովորաբար լսել:

Մարդկանց սիրելի ռադիոհաղորդումները կարող են շատ տարբեր լինել՝ կախված անձնական նախասիրություններից, մշակութային ազդեցություններից և տարածաշրջանից: Այնուամենայնիվ, որոշ համընդհանուր հայտնի ռադիոհաղորդումներ հաճախ առանձնանում են: Դրանք են՝
երաժշտական շոուներ. դրանք կարող են տատանվել որոշակի ժանրերում՝ փոփ, ռոք, դասական կամ ջազից մինչև նոր թողարկումներ, հին դասական կամ նույնիսկ տեղական երաժշտություն ներկայացնող շոուներ:

Թոք շոուներ և փոդքաստներ. քննարկումներ, որոնք ընդգրկում են թեմաների լայն շրջանակ՝ քաղաքականությունից և առօրյա անցուդարձից մինչև ժամանց, ապրելակերպ, առողջություն և խորհուրդներ:
Նորություններ և հասարակական հարցեր. տեղական, ազգային և միջազգային նորությունների թարմացումներ, որոնք հաճախ խառնվում են վերլուծությունների, հարցազրույցների և բանավեճերի հետ:

Հումոր և զվարճանք. կատակերգական էսքիզները, ստենդ-ափ հատվածները, պատմվածքները և թեթևամիտ ժամանցային շոուները ունկնդիրները շատ են սիրում:
Զանգերի ինտերակտիվ շոուներ. ծրագրեր, որտեղ ունկնդիրները կարող են զանգահարել՝ իրենց պատմությունները կիսելու, հարցեր տալու կամ քննարկումներին մասնակցելու համար:
Նախապատվությունները կարող են նաև կախված լինել օրվա ժամից: Այսպես. առավոտյան շոուները տրամադրում են նորություններ և թեթև ժամանց, մինչդեռ երեկոյան հաղորդումները կարող են ավելի շատ կենտրոնանալ երաժշտության կամ հանգստի վրա:
Կան բազմաթիվ փոդքաստներ, որոնք նախատեսված են հատուկ երեխաների համար, որոնք հասանելի են նաև ռադիոհարթակներում: Այս փոդքաստները սպասարկում են տարիքային տարբեր խմբերի և ընդգրկում են թեմաների լայն շրջանակ՝ պատանի և երիտասարդ ունկնդիրներին ներգրավելու համար: Երեխաների կողմից սիրված որոշ հայտնի ռադիոփոդքասթեր ներառում են.
Հեքիաթային փոդքաստներ. որը պատմում է պատմություններ, հեքիաթներ, ժողովրդական հեքիաթներ և արկածներ, որոնք հաճախ ուղեկցվում են ձայնային էֆեկտներով և երաժշտությամբ՝ գրավելու երեխաների երևակայությունը:

Կրթական փոդքաստներ. ծրագրեր, որոնք ուղղված են դպրոցահասակ երեխաների՝ գիտության, պատմության, բնության և այլ կրթական թեմաների ուսուցումը զվարճալի և հասկանալի դարձնելու համար:

Ժամանց. փոդքաստներ, որոնք ներկայացնում են պատանիների հարմար կատակներ, հանելուկներ, կատակերգական էսքիզներ և զվարճալի քննարկումներ ֆիլմերի, խաղերի կամ փոփ մշակույթի մասին:
Երգ և երաժշտություն. շոուներ, մանկական խմբերի և անհատների երաժշտական կատարումներ, և ինտերակտիվ հատվածներ, որոնք խրախուսում են շարժումն ու մասնակցությունը:
Ինտերակտիվ շոուներ. փոդքաստներ, որտեղ երեխաները կարող են զանգահարել, հաղորդագրություններ ուղարկել կամ մասնակցել վիկտորինաների, մրցույթների:
Այս փոդքասթները հաճախ ստեղծվում են երեխաներին զվարճացնելու և կրթելու նպատակով: Դրանք նախագծված են գրավիչ, զվարճալի և համապատասխան տարիքային տարբեր խմբերի համար՝ թույլ տալով երեխաներին լսել և սովորել հաճելի ձևով:
Երեկոյան մեծահասակները հաճախ փնտրում են հանգստի, զվարճանքի կամ երկար օրվանից հետո հանգստանալու հնարավորություն: Այս մթնոլորտին համապատասխանող ռադիոհաղորդումները կարող են ներառել.
Երաժշտական շոուներ. հանգստացնող երաժշտություն, ջազ, դասական մեղեդիներ, որոնք նախատեսված են հանգստանալու համար:
Հարցազրույցներ կամ քննարկումներ. խոսակցական ծրագրեր, որոնք ընդգրկում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են արվեստը, մշակույթը, փիլիսոփայությունը կամ մարդկայինընտանեկան պատմությունները, որոնք մտածելու տեղիք են տալիս, բայց այնքան էլ խթանիչ չեն:
Հումոր կամ թեթև ժամանց. ունկնդրին հրամցվում են կատակերգական էսքիզներ, զվարճալի անեկդոտներ կամ թեթև քննարկումներ, որոնք օգնում են լիցքաթափվել և բարձրացնել տրամադրությունը:

Հանգիստ և մեդիտացիա. մասնագիտացված ծրագրեր, որոնք առաջարկում են ուղղորդված լիցքաթափման տեխնիկա, մեդիտացիայի սեանսներ կամ հանգստացնող ձայներ՝ հանգստանալու և քնի համար:

Ռադիոստուդիան

Հարցազրույց ռադիոյի պատանի թղթակցի հետ

https://soundcloud.com/seda-yengibaryan/22di1a48gorq?si=6695c59cc18345c4ba1d34a18fbfc320&utm_source=clipboard&utm_medium=text&utm_campaign=social_sharing

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի թեման շատ հետաքրքիր էր: Կարծում եմ՝ աշխատանքը շատ օգտակար էր իմ ապագա մասնագիտության կողմնորոշման հարցում: Օգտվել եմ տարբեր նյութերից, հոդվածներից,

որոնք ընթերցելով էլ ավելի լավ եմ ճանաչել ռադիոն։ Հարցազրույցներ եմ կատարել երիտասարդ թղթակիցների հետ։ Երբ ընտրում էի այս թեման, կարծում էի, որ շատ բան գիտեմ, այնինչ ինձ համար կատարեցի նոր բացահայտումներ, որոնք իսկապես շատ հետաքրքիր էին։ Հետազոտությունս ինձ տարավ ռադիոյի աշխարհը, ես հասկացա, որ առանց խոչընդոտների չի կայացել այսօրվա ռադիոն, կարդացի, հասկացա ռադիոհաղորդավարների աշխատանքի դժվարությունները, պատասխանատվությունը։

Ինձ համար այս թեմայի շուրջ աշխատելն իսկապես շատ հետաքրքիր էր և, կարծում եմ, որ կշարունակեմ այն։ Հետազոտությունն ինձ մտքեր տվեց նոր հաղորդումներ ստեղծելու, այլ կերպ ունկնդրին ներկայացնելու մասին։

Սիրելի՛ ունկնդիրներ, ռադիոհաղորդում ընտրելիս հաշվի առեք ձեր անձնական հետաքրքրությունները և այն, ինչը ձեզ օգտակար է, երբեմն էլ օգնում է լիցքաթափվել։ Ինչ-որ բան գտնելը, որը համապատասխանում է ձեր նախասիրություններին, կարող է օրվա ավարտն ավելի հաճելի դարձնել և հանգստացնող երանգ ստեղծել։

Շնորհակալություն

Աղբյուր՝

1. Հայաստանի հանրային ռադիո
2. Հայկական ռադիո
3. Հանրապետության առաջին ռադիոն